Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4611

2758 ե
234 ա
7611

ՊԱՊԻ ԶԵՌՆՈՑՆԵՐԸ

Մանկական վէպ։

«Բանն ինվ անի, ես ու դու.»
«Հացն ինվ ուտի, ես ու դու.»
(առած)

Թարգմանեց

ԳՐԻԳՈՐ ՇԱՀԲՈՒԴԱՂԵԱՆ.

ԹԻՖԼԻՍ.

ՏՊԱՐԱՆ ՄՈՎՍ. ՎԱՐԴԱՆԵԱՆՑ ԵՒ ԸՆԿ.

1881

Доз. Ценз. Тифлисъ, 17-го Ноября 1881 года.
Тип. М. Вартанянца и К°, Троиц. пер., д. №11.

ՊԱՊԻ ՁԵՌՆՈՑՆԵՐԸ։

Մանկական վէպ։

Գուամպօն ճանապարհ էր ընկնում բաղդ որոնելու։ Սա մի գեղեցիկ եռանդոտ երիտասարդ էր, եւ իւր վերայ շատ մեծ կարծիք ունէր. յոյս կար, որ ժամանակով երեւելի մարդ դառնար։

Հայրական տունը թողնելու օրուայ նախընթաց գիշերը նստած մօր հետ վառարանի առաջ, նա մեծ բաւականութեամբ պատմում էր այն երջանկութեան մասին, որ սպասում է իրան ապագայում։ Նա պատ-

մումէր՝ թէ ինչպէս հարստացած տուն կը վերադառնայ՝ եւ իւր հետ կը տանի իւր սիրելի մօրը նոր շինած շքեղ պալատը՝ ուր փոխանակ հիմիկուան պէս ամեն օր կերակուր եփելու՝ տունն աւելելու՝ շորերը լուանալու եւ կարկատելու՝ եւ այսպիսի օգտակար պարապմունքներով ժամանակ անցնելու՝ նա ամբողջ օրը նստած հրաշալի փղոսկրեայ բազկաթոռի վերայ՝ հրամաններ կը տայ գեղեցիկ նաժիշտներին՝ որոնք նորան ծառայելու պատրաստ կը լինին։ Իսկ բարեկամներին տեսութիւն անելու եւ զբօսանքների համար կ՚ունենայ հիանալի կառք՝ չորս՝ սեւ սաթի պէս գեղեցիկ ձիաներով։ Գուամպօի կարծիքով՝ այս ամենամեծ երջանկութիւնն էր՝ որին կարող էր մարդ հասնել։ Իսկ մայրը՝—որը՝ ուղիղն ասած՝ փոքր ինչ

թեթեւամիտ էր եւ բոլորովին կուրացած ապագայի այն հրաշալի երազներով՝ որ պատմում էր նորա սիրելի որդին—ոչ միայն չէր աշխատում չափաւորելու նորա փառասիրական ձգտումները՝ այլ ընդհակառակը՝ աւելի եւս խրախուսում էր՝ բարձրաձայն հաստատելով՝ որ աշխարհումս հարուստ եւ երեւելի մարդ լինելուց առաւել լաւ բան չը կայ՝ եւ եթէ Գուամպօին կը յաջողուի հարստանալ եւ երեւելի դառնալ՝ իւր նուիրական ցանկութիւնը կատարուած կը լինի եւ այնուհետեւ հանգիստ սրտով կը մեռնի։ Գուամպօի հայրը՝ որը փոքր ինչ հեռու՝ փափուկ բազկաթոռի վերայ հանգստանում էր՝ (նա հիւանդ էր) կարծես թէ ուշը չէր դարձնում կնոջ եւ որդու խօսակցութեան վերայ՝ բայց յանկարծ խօսք առաւ եւ ասաց վճռաբար։

—Աւելի լաւ է բարի եւ ազնիւ լինել՝ քան հարուստ եւ երեւելի։ Ես հանգիստ սրտով գերեզման կը մտնեմ, եթէ Գուամպօն տուն վերադառնայ բոլորի սէրն ու յարգանքը գրաւած։

Գուամպօն փոքր ինչ շփոթուեցաւ՝ բայց մայրը նշան արաւ՝ որ ուշը չը դարձնէ հօր խօսքերին՝ որովհետեւ ծերունուն խելագար էր կարծում։ Ծերունին ամէն բանից վեր էր դասում բարեսրտութիւնը եւ ազնուութիւնը՝ եւ ոչ թէ հարստութիւնն ու մեծութիւնը։ Իսկ մի անգամ ինքը քաղցած լինելով՝ իւր ճաշը՝ ինչպէս յեռոյ խմացուեցաւ—մի խղճուկ աղքատի էր տուել՝ որը եկել էր նորա տուն ողորմութիւն խնդրելու։ Բացի սորանից՝ նա օրինակ՝ չէր կարող դիմանալ բամբասանքին՝ եւ երբ հարեւան կանայք հաւաքվում էին նորա կնոջ մօտ բամբասելու մի բարեկամի՝ նա նոցա ամաչեցնելով հասկացնում էր՝ որ ամենավատ բան է ուրիշի յանցանքները քննել՝ եւ ինքը դեռ մինչեւ հիմա չէ իմանում՝ թէ ի՞նչ մեծ բաւականութիւն են զգում մարդիկ՝ երբ մերձաւոր բարեկամի անունը կոտրում են. էլ չը յիշելով՝ թէ ո՞րքան ստոր եւ անազնիւ բան է յարձակուիլ այնպիսի մարդու վերայ՝ որը չի կարող պաշտպանուիլ։ Ծերունու այսպիսի խրատները հաճելի չէին հարեւաններին եւ վերջ ի վերջոյ ամենքը նորան խելագար եւ յիմար ծերուկ էին համարում. իսկ կինը եւ մինչեւ անգամ որդին հաստատում էին նոցա կարծիքը՝ այնպէս որ երբ այս ազնիւ մարդը խրատում էր՝ նորա խօսքին ոչ ոք ականջ չէր դնում։ Այդպէս էլ հիմա էր։ Գուամպօն

ուշք չը դարձնելով հօր խօսքերին, ցածր ձայնով հարցրեց մօրը, թէ առաջին անգամ ի՞նչ բանով սկսի պարապել, որ շուտ հարստանայ։ Մայրը կարծում էր, որ շուտ հարստանալու համար ամենից լաւն էր ձեռքերին միշտ ձեռնոցներ ունենալ։ «Որովհետեւ, ասում էր նա, ամենից առաջ հարկաւոր է որ մարդու ձեռքերը միշտ մաքուր լինին, իսկ մաքուր լինելու համար պէտք է ձեռքերը միշտ ծածկուած պահել։» Եւ խօստացաւ Գուամպօյին մի զոյգ շան կաշուց շինած ձեռնոցներ տալ, որոնք երբեմն իւր հօրն էին պատկանում։ (Որը մի ժամանակ բաւական շատ փող էր վաստակել, բայց նորանով արդէ՞օք, որ միշտ ձեռնոցները հագին էր մանգալիս թէ ոչ, այդ նա չը գիտէր)։ Նա որոշեց, որ միւս առաւօտ, որ-

դու ճանապարհ ընկնելուց առաջ, իւր ձեռով կը հագցնի եւ կը կապի այն ձեռնոցները, որոնց վերայ այնքան մեծ յոյս էր դրել։

Կէս գիշերն անցել էր, երբ մայրը ու որդի իրանց խորհուրդն աւարտեցին, ընթրիք կերան եւ գնացին քնելու։

Գուամպօի համար լաւ առաւօտ լուսացաւ. արեգակը պայծառ լուսաւորում էր. թռչուններն ուրախ երգում էին եւ աշխարհը զուարճանում էր։ Նա հագաւ ճանապարհի շորերը եւ կուշտ նախաճաշելուց յետոյ, յիշեցրեց մօրը խօստացած ձեռնոցները։ Մայրը իսկոյն բերեց, իւր ձեռով հագցրեց եւ այնպէս ամուր կապոտեց, որ եթէ Գուամպօն շատ էլ ցանկանար, չէր կարող առանց ուրիշի օգնութեան յետ անել։ Երբ նա գնաց վերջին մնաս բարեւնա-

սելու հօրը, ծերունին փաթաթուեցաւ նո-
բա վզով, դողդոջուն շրթունքներով համ-
բուրեց նորան եւ խնդրեց որ չը մոռա-
նայ իւր ասածները, թէ հարկաւոր է բա-
րի եւ ազնիւ լինել։ «Կատարիր իմ խօս-
քերը, որդեակ, եւ դու երջանիկ մարդ
կը լինիս»։ Ապա բռնեց որդու երկու ձեռ-
քերից, որ պինդ սեղմի իւր կուրծքին, եւ
տեսաւ ձեռնոցները։

—Ի՞նչ գարշելի բան, ասաց նա. հա-
նի՛ր ձեռնոցներդ, որդեակ, դոքա շատ
կը խանգարեն քեզ կեանքի փշալից ասպա-
րիզում. եւ քանի մեծանաս, կը տեսնես
որ շատ յաճախ օգնութեան ձեռք պէտք
է մեկնես ընկերիդ, իսկ այդ գարշելի
ձեռնոցներով ի՞նչպէս կարող ես օգնել
ուրիշին կամ ինքդ քեզ։ Բայց Գուամ-
պօն ո՛չ թէ սորան էր հաւատում, այլ

մօրը, եւ այս պատճառաւ իսկոյն թողեց
ծերունուն, եւ չը ցանկանալով այլ եւս
նորա ճանձրալի խրատները լսել, շուտով
դուրս գնաց տնից, մինչեւ անգամ մօրն էլ
չը բարեւելով, այն մօրը, որը այնքան սիրել
եւ փայփայել էր նորան։ Մայրը շատ վըշ-
տացաւ, երբ տեսաւ թէ ինչպէս իւր սի-
բասուն զաւակը, առանց յետ նայելու վա-
զում է, ամենեւին չը մտաբերելով իրան
խեղճ կին. այժմ միայն հասկացաւ, որ
որդու այն եսասիրութիւնը, որ ինքն էր
զարգացրել, առաջինը իրեն վնասեց. ո-
րովհետեւ Գուամպօն իր ասածի էր եւ
այդ պատճառաւ էլ չ՝ուզեցաւ տեսնուել
մօր հետ, որ չը զրկուի ձեռնոցներից։

Մի քանի մղոն անցնելով, Գուամպօն
պատահեցաւ մի գիւղացու, որ սայլակով
ճանապարհ էր գնում։ Գուամպօին տես-

նելով, գիւղացին կանգնացրեց սայլակը, եւ բարեկամաբար առաջարկեց երիտասարդ ճանապարհորդին նստել իւր կողքին։ Գուամպօն քաղաքավարութեամբ պատասխանեց, որ թէ եւ հաճելի էր սայլակով գնալ, բայց որովհետեւ դեռ նոր է սկսում հարստանալ, այդ պատճառաւ էլ դեռ փող չ՚ունի այդպիսի շռայլութեան համար։ (Նա կարծում էր, թէ ճանապարհին ով որ պատահում էր նորան, ամենքն էլ իր պէս ցանկանում էին հարստանալ)։ Նա շատ զարմացաւ, երբ գիւղացին ծիծաղեց նորա խօսքերի վերայ, եւ խնդրեց նորան «թռչել սայլակը» ասելով. «դու ինձ առանց փող էլ կարող ես սայլակի վարձը վճարել»։ Գուամպօին այս շատ ձեռնտու էր, եւ իսկոյն նստեց սայլակը եւ շատ գոհ էր, որ վերջապէս կարողացաւ հանգստանալ։ Նոքա բաւական տեղ գնացին, ուրախ խօսակցելով իրար հետ։ Գիւղացին սայլակը կանգնացրեց մի բանջարանոցի մօտ, ուր գետնախնձոր էր ցանած, եւ մի վայրկեանում թռաւ սայլակից, ձին կապեց սիւնից եւ ասաց Գուամպօին. «Դէհ, գնանք շուտով, ես շտապում եմ. պէտք է մի պարկ գետնախնձոր հաւաքեմ եւ եղբօրս համար տանեմ։ Դէհ, վեր թռիր շուտով, եւ օգնիր ինձ, որովհետեւ «ով չուստ, նա կուշտ», ասում է առածը»։ Գուամպօին թէ եւ այս շատ հաճելի չէր, բայց սիրտ առնելով, համաձայնուեցաւ։ Այն միտքը՝ թէ նա պէտք է կռանայ եւ արի՛ տես որ շորերն էլ կեղտոտի, վշտացնում էր նորան. եւ մէկ էլ մտածում էր, որ նա ձրի է աշխատում, մոռանալով որ գիւղացին

այնքան երկար ճանապարհ իրան անվարձ էր բերել։ Բայց եւ այնպէս, նա համաձայնեցաւ գետնախնձոր հաւաքել։ Նա շատ դանդաղ եւ անսիրտ էր աշխատում, եւ մանաւանդ որ ձեռնոցները շատ էին խանգարում նորան, որովհետեւ մատները շատ երկայն էին եւ գետնախնձորն ամեն րոպէ ձեռքից դուրս էր ընկնում։ Նա շատ քիչ բան աւելացրեց այն կոյտին, որը շուտով այնքան մեծացաւ, որ կարելի էր պարկը լցնել։ Գիւղացին լցրեց պարկը, հեգնական ծիծաղով խեղճ Գուամպոլի-ջնջին հաւաքածն էլ վրան աւելացրեց, պարկը ուսին դրած, տարաւ սայլակումը տեղաւորեց, ապա ինքն էլ թռչելով Գուամպոլին գլխով արաւ, ասելով։ «Մընաս բարեաւ, բարեկամ։ եթէ քո սպիտակ, ընքոյշ ձեռքերը չեն կարող աշխատել, թող ուրեմն ոտներդ մի ջոփեն։» Եւ նա առաջ գնաց, թողնելով ամօթահարուած եւ յոգնած Գուամպոլին կէս ճանապարհին։

Բայց սա շուտով սիրտ առաւ, մխիթարեց ինքն իրան, մտածելով, որ գիւղացին այնքան յիմար եւ անկիրթ մարդ էր, որ մինչեւ անգամ չը գիտէր, թէ ի՞նչ մեծ բան է ձեռքերը մաքուր պահել հարստանալու համար, եւ այլ եւս երկար չը մտածելով նորա կոպիտ վարմունքի վերայ, շարունակեց ոտով իւր ճանապարհը։ Այսպէս շատ երկար ճանապարհորդեց, շատ մարդոց պատահեցաւ, շատ արկածներ անցան նորա գլխով, մինչեւ որ վերջապէս դառնութեամբ համոզուեցաւ, թէ մարդիկ այնքան ձանձրացել են իրանից, որ չեն էլ ուզում նորա հետ գործ

2458

ունենալ։ Նա թէ եւ աշխատում էր միշտ
քաղաքավարի լինել, եւ հաստատ գիտէր,
որ ինքը վայելչահասակ է եւ գրաւիչ,
որովհետեւ մայրը շատ անգամ էր ասել,
թէ Նորա պէս սիրուն տղայ քիչ կը լինի։
Բայց չը նայելով որ նա գեղեցիկ էր, նա
ոչ մի բարեկամ չ՚ունէր. եւ մինչեւ ան-
գամ նոքա, որոնք առաջ սիրով ընդու-
նել էին Նորան, վերջը երեսը դարձնում
էին Նորանից, չէին ուզում բարեւ տալ
եւ ճանապարհ էին ցոյց տալիս։ Բանն
այն էր, որ Գուամպօն չէր ուզում ձեռ-
քերին ծանրութիւն տալ. ձեռքերը չը
կեղտոտելու համար այնպէս ամուր էր
հագել ձեռնոցները, որ անընդունակ էր
դարձել որ եւ է բարի եւ օգտակար գործ
կատարելու. եւ միայն խանդարում էր ու-
րիշներին։ Ժամանակն անցնում էր, բայց

Նա դեռ եւս հարստանալու ճանապար-
հը չէր գտել, եւ կարծես թէ աւելի եւս
շեղուել էր Նորանից։ Նորա հագուստը
կամաց կամաց հնանում էր. Նա օրէց օր
նիհարանում էր եւ դեղնում. եւ խեղճ
երեխան օրէցօր հալվում—մաշվում էր։
Այժմ էլ խօսք չէր կարող լինել շքեղ
պալատի եւ մօրը խօստացած փղոսկրեայ
բազկաթոռի մասին։ Նա մինչեւ անգամ
դժուարանում էր գիշերը քնելու տեղ գըտ-
նել, որովհետեւ Նորա ծանօթները (Նա
բարեկամներ չ՚ունէր) ծուռ աչքով էին
նայում Նորա վերայ, երբ տեսնում էին
որ Նա մօտենում էր, եւ այսպէս խեղճ
պատանին իրան թշուառ եւ անբաղդ էր
համարում։ Գուամպօն արիասիրտ էր.
բայց միայնակութեան եւ անհիւրընկալու-
թեան ամենաքաջ սիրտն էլ չի դիմանալ։

Մի անգամ, յոգնած եւ յուսահատուած քաղաքից դուրս եկաւ, եւ գնաց դաշտը։ Նա սկսեց ծաղիկներ հաւաքել եւ միխիթարուել նոցանով, որոց այնքան սիրում էր եւ որոնցով զմայլւում էր մանուկ հասակում. բայց ձեռնոցները դառնացրին նորա այս բաւականութիւնը։ Նա տեսաւ որ հաւաքած սիրուն ծաղիկները տրորուած են եւ թառամած կոպիտ ձեռնոցներով. եւ իւր ծնած օրն անիծելով, ծաղիկները ջրանցքը ձգեց։ Վշտաբեկ սրտով հանգստացաւ մի աղբիւրի մօտ։ Սառուցիկ տօթ էր եւ շոգ, իսկ աղբիւրի պարզ ջուրը արագ արագ խոխոջում էր։ Նա ուզում էր ծարաւը յագեցնել եւ վերականգնել իւր թուլացած ոյժերը, բայց ամանչը կար, որով կարողանար ջուր խմել։ Իսկ բաժակի կամ ջրամանի տեղ բռնով խը-

մել չէր կարող, որովհետեւ ձեռքերին հագած ունէր շան կաշին եւ ամուր կապկպած։

Թշուառ պատանին յուսահատուած երեսի վերայ ընկաւ աղբիւրի ափին։

Հէնց այն րոպէին, երբ նա մտածում էր, որ առաւել լաւ կ'անէր, եթէ քայլերը դէպի տուն ուղղէր, չը կատարելով մօր անմիտ ցանկութիւնները, աղբիւրի ափին մի փոքրիկ աղջիկ երեւեցաւ, սափորն ուսին, որը արագ արագ մօտենում էր աղբիւրին։ Նա կանգնեց աղբիւրի մօտ, լցրեց սափորը ջրով եւ ուզում էր տուն վերադառնալ, երբ յանկարծ նկատեց որ Գուամպօն աչքերը չռած, նորա սափորին է նայում։ Աղջիկը կարմրելով, արագ մօտեցաւ նորան, եւ տուեց ջրով լի ամանը։ Գուամպօն շնորհակալութիւն արաւ, եւ ծարաւը յագեցնելով,

զգաց որ նոր հոգի առաւ։ Փոքրիկ աղ-
ջիկը շատ սիրուն եւ գրաւիչ էր, եւ թէ
եւ Գուամպոյի պէս հաստ ձեռնոցներ չու-
նէր հագած, բայց նորա ձեռքերը շատ
մաքուր եւ սպիտակ էին։ Այս բանը
Գուամպոյին մտածման մէջ ձգեց։ Գուամ-
պոն նայում էր աղջկան այն ժամանակ,
երբ վերջինս մօտենում էր աղբիւրին լը-
նելու դատարկուած սափորը եւ արդէն
ուզում էր վերկենալ տեղից եւ ազատել
աղջկան այս աշխատանքից, — ինչպէս կ'ա-
նէր նոյնը մի փոքր ի շատէ քաղաքավա-
րի մարդ, — բայց հին եսասիրութիւնը յաղ-
թող եղաւ, եւ նա իւր տեղը մնաց, մտա-
ծելով որ նախ եւ առաջ պէտք է ձեռնոց-
ները պահպանել, իսկ քաղաքավարութեան
համար դեռ շատ ժամանակ ունի, նա
այն ժամանակ էլ կարող է քաղաքավարի

լինել, երբ կը հարստանայ եւ ձեռնոցների
կարօտ չի լինիլ։ Մինչդեռ այսպիսի դուրե-
կան մտքերով էր զբաղուած, յանկարծ
նորան սարսափեցրեց փոքրիկ աղջկայ ա-
ղեկտուր ձայնը։ Յետ նայելով, տեսաւ
որ աղջիկը գլխակոր աղբիւրի վերայ,
կարծես թէ մի բան է որոնում նորա
յատակում։ Իսկ դատարկ սափորն ըն-
կած էր գետնին։ Այժմ արդէն Գուամ-
պոն չէր կարող չը մօտենալ եւ չը հարց-
նել պատճառը։ Աղջիկը հեծեծալով հաս-
կացրեց, որ սափորը լցնելիս, ձեռքից ձը-
գել էր ոսկի դրամը եւ ահա փայլում էր
ջրի յատակում։ Ոսկին հօր վաստակի մի
մասն էր, որը աղջկայ ձեռքով ուղարկում
էր կնոջը։ Այժմ ի՞նչպէս տուն վերա-
դառնայ։ Նա թէ եւ տեսնում է ոսկին
որ տեղ է ընկած, բայց չի կարողանում

հանել։ Ցանկարծ մի միտք ծնուեցաւ նորա գլխում եւ բացականչեց։ «Դուք մեծ էք, եւ ձեր ձեռքերը երկայն են։ Չի՞ կարելի որ հանէք այդ ոսկին»։ Խեղճ Գուամպօն այժմ ափսոսում էր, որ ինքը բարձրահասակ է եւ երկայն ձեռքեր ունէ։ Նա ցաւում էր, որ ոսկին հանելիս, կարող է ճանապարհի շորը կեղտոտել եւ ձեռնոցները փչացնել։ Վերջապէս նա փորձեց կռները վերքաշել եւ տեսնել, թէ արդեօք չի՞ կարելի ջուրը չը մտած, ափից հանել ոսկին։ Սաստիկ նեղացած, նա կամեցաւ բարկանալ աղջկայ անզգոյշ վարմունքի վերայ, բայց երբ նայեց նորա տխուր, բարի դէմքին, ամօթահարուեցաւ. բացի սորանից, աղջկայ Գուամպօի վրայ ունեցած վստահութիւնը, թէ նա կարող էր հանել ոսկին, գրգռեց նորա ինքնասիրութիւնը։ Նա մնտեցաւ աղ-

բիւրին, ծունկ չոգեց, եւ ուզում էր արդէն իւր մերկ, բայց ձեռնոցներով կապկպած ձեռքը ջուրը կոխել, երբ յանկարծ աղջիկը ձեռքից բռնեց, բացականչելով։ «Սպասեցէ՛ք, թէ Աստուած կը սիրէք, սպասեցէ՛ք. եթէ չը՞հանէք ձեռքերից դայդ գարշելի ձեռնոցները, դուք վայր կը ձգէք ոսկին եւ կը կորցնէք»։ Գուամպօն զգաց, որ նորան կատարեալ յիմարի տեղ են դնում,—եւ՝ յիրաւի՝ որ՝ յիմարութիւն անողին՝ խելօք ոչ ոք չի՝ ասիլ,—նա սիրտ առնելով մեկնեց աղջկան կուռը, եւ խնդրեց որ իւր հին, այլանդակ ձեռնոցի թելերը յետ անի։ Այս աւելի հեշտ էր ասելքան կատարել. բայց տոկուն համբերութիւնը յաղթում է առաւել մեծ դժուարութիւնների։

Շուտով Գուամպօն տեսաւ նորից իւր

ձեռքը՝ որը այժմ շատ սպիտակ եւ քընքոյշ էր՝ եւ աւելի նման էր կնոջ՝ քան տղամարդու ձեռքին։ Նա ձեռքը կոխեց ջրի մէջ՝ որը իսկոյն յատակին հասաւ՝ եւ մի բոպէ չ՚անցած՝ հանեց ոսկին եւ ուրախացած աղջկան տուեց։ Աղջիկն այնպէս շնորհակալ եղաւ Գուամպօ-ից՝ որ սա այլ եւս ուշք չը դարձնելով իւր ձեռնոցներին՝ կամեցաւ յցնել դատարկ ամանը եւ աղջկան տալ։ Ինչքան էլ չնչին էր նորա բարի վարմունքը՝ բայց այն բոպէից երբ նա այդ արաւ՝ իրան բոլորովին փոխուած տեսաւ՝ եւ առաջարկեց աղջկան լիքը սափորն ուսին հետեւելու մինչեւ իրանց տուն՝ որովհետեւ երկուսն էլ մի ճանապարհով պիտի գնային։ Այսպիսով նոքա բարեկամացան եւ երբ տուն հասան եւ պէտք է բաժա-

նուէին՝ աղջիկն այնպէս աղաչանքով ներս էր հրաւիրում Գուամպօին իրեն հօրն ու մօր հետ տեսնուելու՝ որ նա ոչ միայն համաձայնուեցաւ՝ այլ եւ այնպիսի մի քաղաքավարութեամբ շնորհակալութիւն յայտնեց՝ որ ինքն էլ՝ ակամայ համոզուեցաւ՝ որ յիրաւի ամենագրաւիչ եւ սիրելի երիտասարդ է։

Գուամպօի բաղդից՝ աղջկայ մայրը շատ պարզասիրտ եւ բարի կին էր։ Նա խղճաց աղքատ թափառական պատանու։ վերայ՝ եւ ուզում էր վարձատրել նորան իւր աղջկան արած լաւութեան փոխարէն։ Նա ոչինչ չը գիտէր ձեռնոցների մասին՝ որովհետեւ աղքիւրից տուն վերադառնալիս՝ Գուամպօն խնդրել էր իւր փոքրիկ բարեկամուհուց ազատել իրեն եւ միւս ձեռնոցից՝ որովհետեւ այս կատարեալ ան-

խելք երիտասարդը վերջապէս հասկացաւ, որ ձեռնոցներից բացի վնասը, օգուտ չ՚ունի։ Նա այդպիսով եկաւ նոցա ագարակը։ Իբրեւ հասարակ մահկանացու, թէ եւ փոքր ինչ էլ քաղցած, բայց դորան հեշտ էր ճար անել։ Նորան լաւ կուշտ ճաշ ուտեցրին, որին այնքան երկար ժամանակ կարօտում էր, եւ ապա խոհեմ տան տիկինը առաջարկեց նորան բանել այգիում, մինչեւ իւր ամուսնու վերադարձը։ Գուամպօն չէր սիրում մշակութիւն անել, եւ ճիշտն ասած, չէր էլ ընտելացած աշխատելուն, բայց նա շարժուած էր այս բարի կնոջ վարմունքով։ Կուշտ ճաշը եւ սիրալիր հիւրընկալութիւնը զօրացրին նորա ոյժերը, ձեռքերն այնպէս թեթեւ եւ արագ էին գործում, որ փոքր առ փոքր գրաւուեցաւ գործով

եւ սկսեց մեծ եռանդով փորել։ Երբ կարուածատերը վերադարձաւ, նա սիրով եւ յօժարութեամբ ընդունեց բարի եւ աշխատասէր մանկան, եւ դեռ արեւը մայր չը մտած, արդէն առաջարկել էր նորան պարապմունք եւ օթեւան։ Գուամպօն սիրով ընդունեց այս առաջարկութիւնը, մոռանալով անգամ երաշելու մօրը խօսուացած՝ շքեղ պալատի եւ փղոսկրեայ բազկաթոռի վերայ։

Բաւական երկար ժամանակ էր անցել, իսկ Գուամպօն դարձեալ իւր ազնիւ բարեկամների մօտ էր կենում, եւ այնպէս լաւ էր կատարում իւր գործը, որ թէ եւ շատ չը հարստացաւ, բայց կարող էր ունեւոր մարդ համարուիլ եւ յաւ ապագայի տէր։ Նա այժմ իւր սեպհական տանն էր ապրում եւ առաջարկեց իւր

Ն ՍԻՏ. ԱՐԻՍՏԱԿԵՍ

փոքրիկ բարեկամուհուն, որը այժմ գեղատեսիլ, համեստ նշանելու աղջիկ էր դարձել, իրան կին լինել։ Աղջկայ հայրը սաստիկ ուրախացաւ եւ ինքը իւր ոտով գնաց նորա ծնողացը հրաւիրելու, որ միասին հարսանիք անեն։ Ի՞նչ մեծ ուրախութիւն էր, երբ Գուամպոի հայրն ու մայրը եկան։ Ծերունին, որ միշտ կարծում էր, թէ «աւելի լաւ է բարի եւ աղնիւ լինել, քան հարուստ եւ երեւելի», այնքան ուրախ էր, երբ տեսնում էր, թէ ինչպէս բոլորը յարգանքով էին վարվում իւր որդու հետ։ Իսկ նորա կինը մնացել էր զարմացած։ Նա այնպէս հաստատ մտքումը դրել էր, որ անպատճառ փղոսկրեայ բազկաթոռ պէտք է ունենայ, որ շատ դժուար էր չամոզել նորան, թէ իւր որդու ընդունարանը զարդարող փափուկ բազ-

դեայ բազկաթոռները աւելի լաւ եւ առաւել ամուր են փղոսկրեայ բազկաթոռից։ Բայց փոքր առ փոքր, իւր ապագայ հարսնացուի ցոյց տուած սէրն ու համակրութիւնը սփոփեցին նորա վշտերը, եւ նա հետզհետէ առաւել սիրով եւ յօժարութեամբ ականջ էր դնում երիտասարդներին, երբ նոքա ապագայ կեանքի տեսակ տեսակ ծրագիրներ էին պատրաստում, թէ ինչպէս նոքա երջանիկ կեանք կ՚անցնեն պսակուելուց յետոյ։ Նա ուրախանում էր, որ աղնիւ երիտասարդ ամուսինները իրենց հոգսերով զբաղուած ժամանակն էլ՝ դարձեալ չէին մոռացել ոչ իրան եւ ոչ ծերունի հիւանդ հօրը։ Տեսնելով որ երիտասարդ հարս ու փեսան երբէ՛ք չեն մոռանում իրան, նա յիշեց այն տխուր օրը, երբ իւր սիրելի Գուամպոն ճանապարհ

ընկաւ բաղդ որոնելու եւ մոռացաւ միչեւ անգամ սիրելի մօրը։ Այժմ նա կիսաձայն հարցրեց նորան. «ի՞նչ եղան ձեռնոցները»։

—Ես պահեցի ձեռնոցները, որ ձեզ յանձնեմ, մայրիկ։ Դուք այժմ ծեր էք, եւ պէտք է ձեզ լաւ պահպանէք, որ տաք հագնուէք։ Իսկ դոքա ինձ հարկաւոր չեն, որովհետեւ ես ծաղիկ հասակումն եմ եւ առողջ։ Ես փորձով գիտեմ, որ մարդս եթէ իւր պարտականութիւնները լաւ է ճանաչում, եւ հաստատամտութեամբ կատարում է նոյնը, ձեռքերը մաքուր պահելու համար նորան ձեռնոցներ հարկաւոր չեն։ Իսկ ուրիշին օգնելը առանց ձեռնոցների աւելի յարմար է։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ